



AMERICAN UNIVERSITY OF ARMENIA

Center for
Responsible Mining

Հանքարդյունաբերության օրենսդրության
բարեփոխման նախաձեռնություն

Աշխատանքային փաստաթուղթ 6
Միջազգային լավագույն փորձի վերաբերյալ
փաստաթղթերի շարք

Աշխատողների առողջություն և անվտանգություն

Դոկտոր Վլադո Վիվոդա

Քուինզլենդի համալսարան

Կայուն հանածոների ինստիտուտ

Հանքարդյունաբերության ոլորտում սոցիալական
պատասխանատվության կենտրոն

Դոկտոր Ջոնաթան Ֆուլչեր

Քուինզլենդի համալսարան

Թ.Ս. Բիրնի անվան իրավաբանության բաժին

Փետրվար 2017

mlri.crm.aua.am

Աշխատողների առողջություն և անվտանգություն

Վլադո Վիվոդա և Ջոնաթան Ֆուլչեր (2017)

Միջազգային լավագույն փորձի վերաբերյալ փաստաթղթերի շարք

Աշխատանքային փաստաթուղթ 6

Հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխման նախաձեռնություն,

ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն

Հիմնաբառեր` Հանքարդյունաբերություն, Պատասխանատու, Հայաստան, Աշխատողների առողջություն. Անվտանգություն

Փաստաթղթերի շարքի և ՀՕԲՆ-ի մասին

Միջազգային լավագույն փորձի վերաբերյալ փաստաթղթերի այս շարքը պատրաստվել է Հայաստանի ամերիկյան համալսարանի (ՀԱՀ) Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի «Հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխման նախաձեռնություն» (ՀՕԲՆ) ծրագրի շրջանակներում: ՀՕԲՆ-ը հնարավոր դարձավ **Թուֆենկյան» հիմնադրամի** ֆինանսական աջակցության շնորհիվ, նախաձեռնության նպատակն է երաշխավորել, որ հանքարդյունաբերությունը երկրին և տեղական համայնքներին տրամադրի բավարար օգուտներ: Նախաձեռնության նպատակներից է մշակել և Ազգային ժողովի խմբակցություններին ներկայացնել այնպիսի օրինագծեր, որոնք կավելացնեն հանքարդյունաբերության տված հասարակական և տնտեսական օգուտները և միաժամանակ կնվազեցնեն շրջակա միջավայրի և հանրային առողջության վրա ունեցած բացասական ազդեցությունները: ՀՕԲՆ-ի գործունեության գլխավոր առանցքը քաղաքացիական հասարակության, շահերի պաշտպանության խմբերի, գիտական հաստատությունների և համապատասխան ազգային ու միջազգային կազմակերպությունների հետ համագործակցությունն ու գործընկերությունն է: ՀՕԲՆ-ը համագործակցում է գործադիր և օրենսդիր մարմինների հետ` օրենքների նախագծերը ԱԺ-ում անցկացնելու համար: Ավելին իմանալու համար այցելեք` <http://mlri.crm.ava.am>:

ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնի մասին

Հայաստանի ամերիկյան համալսարանի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնը (ՀԱՀ ՊԿԿ) հետազոտական աշխատանքի, կրթության և շահերի պաշտպանության միջոցով նպաստում է Հայաստանում սոցիալական, բնապահպանական և տնտեսական առումով պատասխանատու հանքարդյունաբերության` աշխարհում հայտնի լավագույն փորձի յուրացմանը, փոխանցմանն ու հարմարեցմանը: Այս նպատակին հասնելու համար ՀԱՀ-ի Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոնը կներգրավի բոլոր շահագրգիռ կողմերին` բնապահպանական խմբերին, ֆինանսական հաստատություններին, հանքարդյունաբերության ոլորտի, քաղաքացիական հասարակության և պետական կառույցների ներկայացուցիչներին: Ավելին իմանալու համար այցելեք` <http://crm.ava.am>:

Ինչպես հղում անել այս զեկույցին

Վիվոդա, Վ. և Ֆուլչեր, Ջ. (2017): Աշխատողների առողջություն և անվտանգություն (Միջազգային լավագույն փորձի վերաբերյալ փաստաթղթերի շարք, Աշխատանքային փաստաթուղթ 6, Հանքարդյունաբերության օրենսդրության բարեփոխման նախաձեռնություն), ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն: Հայաստանի ամերիկյան համալսարան (Երևան, Հայաստան): Ներբեռնված է հետևյալ էլ. հասցեից` <http://mlri.crm.ava.am>:

Ներածություն

Հանքարդյունաբերական գործունեությունը ներառում է գործողությունների բազմազան շերտ և աշխատանքներ, որոնք ունեն նույնքան բազմազան առողջապահական և անվտանգության ռիսկեր: Այս վտանգները կարող են հանգեցնել մահաբերության և վնասվածքների անընդունելի չափերի: Առողջապահությունը և անվտանգությունը հանքարդյունաբերության ոլորտում կարող է բարելավվել միայն եթե բացահայտվեն ռիսկերը և դրանց տրվեն արդյունավետ լուծումներ: Վերջին երեք տասնամյակի ընթացքում շատ երկրներում մեծ առաջընթաց է գրանցվել հանքարդյունաբերության մեջ վթարների նվազեցման գործում: Մեծ, հիմնականում մեքենայացված հանքերը, որոնք ունեն համեմատաբար փոքր թվաքանակով աշխատուժ գրանցել են մահացությունների և վնասվածքների դեպքերի կտրուկ նվազում: Այլ վայրերում նույնպես կտրուկ վատացել է աշխատողների առողջության և անվտանգության համակարգը: Օրինակ Ռուսաստանում 1980 և 2010թթ-ի արանքում վթարների և մահացությունների ավելի քան 60 տոկոսը կարելի է վերագրել կառավարման խնդիրներին՝ անվտանգության մասին կարգավորումների խախտում, աշխատանքի վատ կազմակերպում, աշխատանքի անվտանգության սերտիֆիկացված մասնագետների և անձնակազմի պատշաճ վերապատրաստման պակաս:¹ Իսկ օրենսդիրները, զբաղված լինելով ոլորտի և բիզնեսի շահերի պաշտպանությամբ, սովորաբար անուշադրության են մատնում աշխատանքային առողջությունն ու անվտանգությունը և աշխատողների իրավունքները: Աշխատողները հաճախ աշխատանքի են ընդունվում այնպիսի պայմաններով, որոնք չեն համապատասխանում միջազգային չափանիշների նվազագույն պահանջներին:

Առկա իրավիճակը Հայաստանում

Նախորդ տասնամյակի ընթացքում Հայաստանում աշխատավայրում տեղի ունեցած վթարների մոտ 50 % եղել է Սյունիքի մարզում, որտեղ բնակվում է Հայաստանի բնակչության և աշխատուժի միայն 5 տոկոսը: Սյունիքի տնտեսությունը հիմնավորապես կախված է հանքարդյունաբերությունից (հանքարդյունաբերության ոլորտի ողջ արտադրանքի 90% գալիս է Սյունիքից, իսկ Սյունիքում բոլոր արտադրանքների 85% գալիս է հանքարդյունաբերությունից), որը թույլ է տալիս եզրակացնել, որ հանքարդյունաբերությունը Հայաստանի ամենառիսկային արդյունաբերական ոլորտն է:

Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգիրքը (2004թ) աշխատողների անվտանգությանը և առողջությանը /ԱԱԱ/ վերաբերող հիմնական օրենսդրությունն է:

¹ Dudarev, A.A., Karnachev, I.P., & Odland, J.Ø. (2013): [Occupational accidents in Russia and the Russian Arctic](#). *International Journal of Circumpolar Health /Շուրջբևեռային առողջության միջազգային ամսագիր/*

Օրենսգրքի 23-րդ գլուխը նվիրված է աշխատողների անվտանգության և առողջության պայմաններին:² Ինչպես սահմանված է Աշխատանքային օրենսգրքում, աշխատողների անվտանգության և առողջության հարցերը կարգավորվում են Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության կողմից (ԱՄՅՆ), իսկ Աշխատանքի պետական տեսչությունը կարգավորումները կիրարկում է գործատուների հետ խորհրդատվության և պարբերական ստուգումների միջոցով:

Կախված կոնկրետ արդյունաբերական ոլորտից՝ աշխատողների առողջության և անվտանգության կարգավորման շրջանակը կամ հիմնված է հնացած սովետական կարգավորումների վրա, կամ այն պարզապես գոյություն չունի: Առողջության և անվտանգության խնդիրների շուրջ հանրային իրազեկվածության մակարդակը ցածր է, իսկ վտանգների և ռիսկերի իրական չափերի մասին գիտելիքը տեղական և ապակենտրոնացված բնույթ ունի:³ Աշխատողների առողջության և անվտանգության հարցերի հետ կապված չկա համակարգային մոտեցում: Գործատուներին անբավարար ուշադրությունը աշխատողների առողջությանն ու անվտանգությանը, աշխատողների վերապատրաստումը անվտանգության կանոնների վերաբերյալ և ցուցումների տրամադրման անփոյթ բնույթը առնչվում են վնասվածքների, մահացությունների և աշխատանքով պայմանավորված հիվանդությունների հետ:⁴

Միջազգային լավագույն փորձ

Ավստրալիա

Հանքարդյունաբերության ԱԱԱ-ին վերաբերող օրենսդրությունը Ավստրալիայում հիմնականում համարվում է ամենաառաջադեմն աշխարհում: Օրենսդրությունը հիմնված է խնամքի պարտավորության, ռիսկերի կառավարման սկզբունքների և աշխատուժի ներկայացուցչության վրա, իսկ աշխատավայրի անվտանգությունը ապահովելու գլխավոր պատասխանատվությունը վերապահվում է հանքավայրը շահագործող ընկերությանը: Կառավարության տեսուչները գործում են թե որպես կարգավորումները կիրարկողներ, թե որպես խորհրդատուներ, ովքեր խրախուսում են առողջության և անվտանգության լավ պայմանների կիրառում: Կարգավորումների կիրարկումը սովորաբար կախված է ռիսկերից, իսկ գործողությունները սահմանվում են ըստ ռիսկի աստիճանի և անմիջականության:⁵

² Տես՝ http://www.ilo.org/ifpdial/information-resources/national-labour-law-profiles/WCMS_158891/lang-en/index.htm:

³ Տես՝ http://pdf.usaid.gov/pdf_docs/Pnadb497.pdf:

⁴ Տես՝ http://www.un.am/up/library/Safety-Health_RA_NP_eng.pdf:

⁵ Cliff, D. (2012): [The Management of Occupational Health and Safety in the Australian Mining Industry](#).

Հանքարդյունաբերություն հանուն զարգացման միջազգային կենտրոն /International Mining for Development Centre/: *Guide to Australian Practice*:

2011թ-ի Համագործակցության աշխատանքային առողջապահության և անվտանգության ակտը սահմանում է շրջանակը, որը պաշտպանում է աշխատողների առողջությունը, անվտանգությունն ու սոցիալական ապահովությունը աշխատավայրում: Այն նաև պաշտպանում կատարվող աշխատանքից տուժող որևէ մեկի առողջությունն ու անվտանգությունը: Թեև հանքերի անվտանգությունը Ավստրալիայում պետական մակարդակի պատասխանատվություն է, հանքերի անվտանգության չափանիշների հարցում գոյություն ունի համազգային միասնականություն (տես Աղյուսակ 3):

Աղյուսակ 3. Հանքարդյունաբերության ոլորտում առողջության և անվտանգության օրենսդրական շրջանակներ⁶

Տարածք	Օրենսդրական շրջանակ
Ավստրալական մայրաքաղաքային տարածք, Թասմանիա	2014թ-ին իրականացված ԱԱԱ (հանքեր) օրինակելի կարգավորումներ
Հյուսիսային տարածք, Վիկտորիա, Համագործակցություն /Commonwealth/	Հանքարդյունաբերությունը կարգավորվում է աշխատողների առողջության ու անվտանգության մասին հիմնական օրենսդրությամբ, կան նաև հատուկ հանքարդյունաբերական կարգավորումներ
Նոր հարավային Ուելս	2013թ-ին ընդունվել է <i>Աշխատողների առողջության և անվտանգության (հանքեր) մասին օրինագիծը</i> , որը հնարավորություն դարձրեց հանքարդյունաբերությանը հատուկ կարգավորումների մշակումը:
Քուինզլենդ	Հանքարդյունաբերությունը կարգավորվում է հանքարդյունաբերական առողջության և անվտանգության մասին առանձին օրենսդրությամբ:
Հարավային Ավստրալիա	2014թ-ի հունվարի 1-ին ուժի մեջ մտան <i>Հանքերի /ԱԱԱ/ օրինակելի կարգավորումները</i> որպես 2012թ-ի <i>Աշխատողների առողջության և անվտանգության կարգավորումների (ՀԱ) 10-րդ գլուխ</i> :
Արևմտյան Ավստրալիա	2015թ-ի սկզբին ԱԱԱ մոդելային օրենքների հիման վրա ներկայացվեց բնական ռեսուրսների ոլորտում աշխատողների առողջության և անվտանգության նոր օրենսդրությունը:

⁶ Աղբյուր՝ <http://www.safeworkaustralia.gov.au/sites/swa/whs-information/mining/pages/mining>:

Ավստրալական ԱԱԱ մասին օրենսդրությունը պահանջում է, որպեսզի ընկերությունները և աշխատողները կրեն «խնամքի պարտավորություն»: Խնամքի պարտավորությունը կիսվում է գործատուի և աշխատողի միջև: Սակայն գլխավոր պատասխանատվությունը պատկանում է գործատուին, ով վերահսկում է աշխատանքային պայմանները: Գործատուի պարտավորությունն ավելի մեծ է աշխատողի պարտավորությունից, որովհետև վերջինս անփորձ է գործատուի համեմատությամբ: Օրենսդրությունը պահանջում է, որպեսզի հաշվետվությամբ ներկայացվեն բոլոր վթարներն ու պատահարները, վնասվածքներն ու լուրջ հիվանդությունները: Օրենսդրությամբ նաև պահանջվում է, որ հանքավայրերը իրականացնեն պարբերական ստուգման և վերանայման աշխատանքներ, որոնք ուսումնասիրության ենթակա են կարգավորող մարմնի կողմից: Հանքերի մեծամասնությունը երրորդ կողմ հանդիսացող հավատարմագրված աուդիտորներին են պատվիրում իրենց համակարգերի ստուգումը:⁷

Բացի խիստ իրավական համակարգից շատ մեծամասշտաբ արդյունահանողներ ունեն ներքին անվտանգության չափանիշներ, որոնք նույնիսկ ավելի խիստ են, քան օրենքով պահանջվող ստանդարտները: Արդյունքում Ավստրալիայում վթարների թիվը Ավստրալիայի հանքարդյունաբերական ոլորտում համաշխարհային չափանիշներից ցածր է: Վերջին հինգ տարիների ընթացքում՝ 2007-08թթ-ից մինչև 2011-12թթ-ը աշխատավայրում ստացված վնասվածքների պատճառով գրանցվել է հանքարդյունաբերական աշխատողների 36 մահացության դեպք, որոնցից 21 պատահար կապված է եղել մեքենայի հետ: Մահացությունների ընդհանուր թիվը 100,000 աշխատողի համար կազմել է 3,84, որն ավելին է, քան երկրի միջինը՝ 2,29, սակայն ցածր է շատ այլ երկրների հետ համեմատած:⁸ 2012-13թթ-ին Ավստրալիայի հանքարդյունաբերության ոլորտում աշխատանքի հետ կապված հիվանդությունների և վնասվածքների հաճախականության մակարդակը կազմել է 5 (աշխատած մեկ միլիոն ժամի ընթացքում գրանցվող դեպքեր), իսկ այլ ոլորտներում այն կազմել է 6,7:⁹ Նույն հաշվետու ժամանակաշրջանում աշխատանքի հետ առնչվող վնասվածքների և հիվանդությունների հաճախականությունը (հազար աշխատողին ընկնող դեպքերի քանակը) կազմել է 11,4 հանքարդյունաբերության ոլորտում և 11՝ այլ ոլորտներում:¹⁰

Բոլոր հանքարդյունաբերական ընկերություններն ունեն *առողջության և անվտանգության պլաններ* և *արտակարգ պատահարների կառավարման պլաններ*, որոնք ներառում են ծրագրերի՝ շինարարության և շահագործման բոլոր ասպեկտները:

⁷ Cliff (2012)

⁸ Անվտանգ աշխատանքի Ավստրալիա (2012թ): [Mining Fact Sheet:](#)

⁹ Անվտանգ աշխատանքի Ավստրալիա (2013թ): [Work Health and Safety Statistics: Frequency Rates of Serious Claims by Industry, 2000-01 to 2012-13:](#)

¹⁰ Անվտանգ աշխատանքի Ավստրալիա (2013թ):

Այս պլաններն ընդգրկում են առաջին օգնություն և հիմնական բժշկական ծառայություններ, կրակի կանխում և հրշեջային սարքավորումներ և անվտանգություն: *Աշխատուժի կառավարման պլանները* ապահովում են ծրագրի մշակողների և բոլոր կապալառուների կողմից աշխատուժի կառավարումը և ներառում են աշխատուժի սոցիալական ապահովության, առողջության և անվտանգության, կրթության, վերապատրաստման և էթիկայի կանոնների բոլոր տարրերը:

Ավստրալական հանքարդյունաբերական ԱԱԱ-ի մասին օրենսդրության բաղկացուցիչ մասերից է աշխատուժի դերը ԱԱԱ կառավարումն իրականացնելու հարցում: Յուրաքանչյուր հանքավայրում կան ԱԱԱ հանձնաժողովներ, որտեղ ներկայացված են աշխատողները, որոնք իրենց ներդրումն են կատարում անվտանգության ընթացակարգերի և պլանների մշակման գործում: Հիմնականում լինում են նաև հանքավայրի անվտանգության և առողջության ներկայացուցիչներ, որոնք ընտրվում են աշխատուժի կողմից: Այս ներկայացուցիչները սահմանափակ իրավունքներ ունեն ընթացակարգեր և պլաններ ստուգելու առումով, բայց կարող են աշխատողներին հրահանգել լքել աշխատավայրը անվտանգության նկատառումներով: Այս ներկայացուցիչները սովորաբար ԱԱԱ մտահոգություններ ունեցող աշխատողի համար իրենց մտահոգությունները հայտնելու առաջին մարմինն են: Ներկայացուցիչն այնուհետև հարցը բարձրացնում է հանքի ղեկավարության մոտ: Եթե նա չի կարողանում ստանալ հարցին բավարարող լուծում, ապա կարող է բողոքն ուղարկել հանքերի տեսուչներին կամ ողջ ոլորտի աշխատուժի ներկայացուցչին՝ հետագա քայլեր ձեռնարկելու նպատակով:¹¹ Ավստրալիայի հանքարդյունաբերության ոլորտը աշխարհում առաջատարներից վթարների դեպքում փոխհատուցում տրամադրելու առումով: Աշխատավայրում լուրջ վթարների զոհերը կարող են ակնկալել ավելի քան կես միլիոն դոլար միանվագ փոխհատուցում:

Չիլի

ԱԱԱ-ն իրականացնող գլխավոր իրավական գործիքն *Աշխատանքային օրենսգիրքն* է, որը ներառում է դրույթներ աշխատավայրում հանդիպող բազմաթիվ խնդիրների շուրջ, այդ թվում՝ առողջությանը և անվտանգությանն առնչվող կիրառելի, բայց հանքարդյունաբերության ոլորտին ոչ հատուկ դրույթներ: *Աշխատանքային օրենսգիրքը* սահմանում է, որ գործատուները պարտավոր են ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ աշխատողների կյանքն ու առողջությունը արդյունավետ կերպով պաշտպանելու համար:¹²

¹¹ Cliff (2012թ):

¹² Código del Trabajo (2015թ):

Աշխատանքի հետ կապված վթարների և հիվանդությունների մասին 16.744 օրենքը սահմանում է մի շարք կարևոր դրույթներ և իրավունքներ աշխատողների առողջության և անվտանգության առումով:¹³ Այս իրավունքները ներառում են աշխատողների անվճար բժշկական օգնության իրավունքը աշխատվայրում գրանցված վթարի կամ հիվանդության պարագայում: Օրենքը նաև ստեղծում է ապահովագրական համակարգ՝ նշված դրույթը իրականացնելու համար: *16.744 օրենքը* նաև պահանջում է, որպեսզի 25 և ավելի աշխատող ունեցող ընկերությունները ստեղծեն հիգիենայի և անվտանգության գործընկերային հանձնաժողովներ:

*Աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարության 1969թ-ի 54 հրամանը (լրացվել է 2010թ-ի հրաման 50-ով)*¹⁴ հաստատում է այն կարգավորումը, որով գործում են հանձնաժողովները, և սահմանում է մանրամասներ նրանց ֆունկցիաների վերաբերյալ:

Առողջապահության նախարարության 1999թ-ի N°594 գերագույն հրամանով սահմանվել են աշխատավայրի հիմնական առողջապահական կարգավորումները, որոնցից շատերը համապատասխանում են նաև հանքարդյունաբերության ոլորտին:¹⁵ Օրինակ, այն սահմանում է բժշկական խնամքի հատուկ պայմաններ ծովի մակարդակից 3,000 մետր բարձրության վրա գտնվող աշխատավայրերի համար, որը կիրառելի է Չիլիում գտնվող հանքարդյունաբերական ծրագրերի 80 տոկոսի համար:¹⁶ Այս պահանջները ներառում են, օրինակ, հանքավայրի տարածքում արտակարգ պատահարներին արձագանքող թիմի առկայությունը, իսկ 50-ից ավելի աշխատողներ ունեցող ծրագրերի դեպքում՝ տեղում առողջապահական կլինիկա ունենալը:

Հանքարդյունաբերության նախարարության 2002թ-ի N°132 հրամանը ներառում է հատուկ պահանջներ, օրինակ, հանքավայրերում առողջապահական ծառայության մասին:¹⁷ Այն սահմանում է հանքարդյունաբերող ընկերությունների պատասխանատվությունը իրենց կապալառուների և ծառայություններ տրամադրողների առողջության և անվտանգության համար:

¹³ Աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարություն (1968թ), ‘Ley 16.744 Establece Normas sobre Accidentes del Trabajo y Enfermedades Profesionales’:

¹⁴ Աշխատանքի և սոցիալական ապահովության նախարարություն (1969թ), ‘Decreto 54 Aprueba Reglamento Para la Constitución y Funcionamiento de los Comités Paritarios de Higiene y Seguridad’.

¹⁵ Ministerio de Salud (1999), ‘Decreto Supremo 594, Aprueba Reglamento sobre Condiciones Sanitarias y Ambientales Básicas en los Lugares de Trabajo’.

¹⁶ Oñate, C.C. & López, P.V. (2011), ‘Cuaderno de Investigación 40: Una Aproximación a las Condiciones de Trabajo en la Gran Minería de Altura’, Santiago: Dirección del Trabajo de Chile.

¹⁷ Հանքարդյունաբերության նախարարություն (2002թ), ‘Decreto Supremo 132 Reglamento de Seguridad Minera’.

19.300 օրենքը սահմանում է Չիլի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման համակարգը և նշում բնապահպանական և սոցիալական ազդեցությունների, այդ թվում առողջապահական ազդեցությունների լայն շրջանակ, որոնց արդյունահանող ընկերությունները պարտավոր են անդրադառնալ:¹⁸

Իրականացնող երկու գլխավոր գերատեսչություններից են Աշխատանքի բյուրոն, որը վերահսկում է համապատասխանությունը ընդհանուր նորմերի հետ, և Երկրաբանության և հանքարդյունաբերության պետական ծառայությունը (ԵՅՊԾ), որն իրականացնում է հանքարդյունաբերության ոլորտի վերահսկողությունը: Թեև ԵՅՊԾ-ն կարող է սահմանել տուգանքներ և ժամանակավորապես դադարեցնել շահագործման աշխատանքները, այն չունի հանքի շահագործումը վերջնականապես դադարեցնելու իրավասություն:

Հանքարդյունաբերության ոլորտը Չիլիում համարվում է անվտանգության ամենաբարձր չափանիշներ ունեցող ոլորտը: Սա պայմանավորված է երկրում ԱՆԱ-ն կառավարող հզոր իրավական շրջանակով, ինչպես նաև այն փաստով, որ մեծ թվով հանքարդյունաբերական ծրագրեր ունեն անվտանգության խիստ ստանդարտներ: Արդյունքում վթարները Չիլի հանքարդյունաբերական ոլորտում քիչ են. 2014թ-ին 100 աշխատողի կտրվածքով գրանցվել է 1,7 վթար: Սա շատ ցածր է այլ ոլորտների վթարների մակարդակից և ընդհանուր երկրի վթարների մակարդակից, որտեղ միջինը գրանցվում է 5 վթար յուրաքանչյուր 100 աշխատողի համար:¹⁹

Վթարները, սակայն, լինում են լուրջ, որոնց արդյունքում ավելի շատ օրեր են կորչում, քան մյուս այլ ոլորտներում: 2013թ-ին, օրինակ, հանքարդյունաբերական վթարները հանգեցրին միջինը 38,5 կորսված օրվա, որը զգալիորեն բարձր է մյուս ոլորտների ցուցանիշներից և ազգային միջին 17,3 ցուցանիշից:²⁰ Հանքարդյունաբերական վթարների լրջության աստիճանը նաև արտացոլվում է ոլորտի մահացության աստիճանում, որը բարձր է՝ համեմատած այլ ոլորտների հետ: 2014թ-ին գրանցվել է 18,17 մահ 100,000 աշխատողի կտրվածքով,²¹ ինչը շատ բարձր է ազգային միջինից՝ 4,54 մահ յուրաքանչյուր 100,000 աշխատողի հաշվով:²²

¹⁸ Բնապահպանության նախարարություն (1994թ), 'Ley 19.300 Sobre Bases Generales del Medio Ambiente' (լրացված 2010թ-ի 20.417 օրենքով):

¹⁹ Consejo Minero (2015), 'Minería en Cifras', Santiago: Consejo Minero: Չիլիում վթարների ամենավատ մակարդակ ունեցող ոլորտը արդյունաբերությունն է՝ 2014թ-ի տվյալներով՝ 6,8 վթար ըստ 100 աշխատողի:

²⁰ Larrain, M.J.Z. (2014), 'Estadísticas de Accidentabilidad', Santiago: Superintendencia de Seguridad Social.

²¹ Consejo Minero (2015).

²² Նույն տեղում: Միակ ոլորտը, որտեղ մահացության մակարդակը ավելի բարձր է, քան հանքարդյունաբերության ոլորտում, դա տրանսպորտի և հեռահաղորդակցության ոլորտներ է, որտեղ մահացության մակարդակը 2014թ-ին կազմել է 20,15 ըստ 100,000 աշխատողի:

Ընդհանուր հաշվով վերջին տարիներին թե մահացության աստիճանը, և թե վթարների թիվը զգալիորեն պակասել են:²³ 2003թ-ին մահացությունների թիվն ըստ մեկ միլիոն աշխատանքային ժամի կազմել է 0,13, որն արդեն 2011թ-ին կազմեց 0,07 և 2014թ-ին՝ 0,06:²⁴ Կան հիմքեր պնդելու, որ նույնիսկ երբ ընկերությունները հետևում են օրենսդրության պահանջներին, աշխատողները ոչ միշտ են ընդգրկում այդ պահանջներն առողջությանն ու անվտանգությանը վերաբերող իրենց «մշակույթի» մեջ: Օրինակ, չնայած նրան, որ *Nº594 Գերագույն հրամանը* պահանջում է տեղում ունենալ հանդերձարաններ և ցնցուղ ընդունելու պայմաններ այն աշխատողների համար, ովքեր շփում են ունենում քիմիական նյութերի հետ (ըստ մի ուսումնասիրության, ընկերությունների 77 տոկոսը կատարում են այս պահանջը), աշխատողների միայն 24,2 տոկոսն է դրանք օգտագործում: Մյուսները ցնցուղ են ընդունում տանը կամ ճամբարներում, ինչը նշանակում է, որ քիմիական աղտոտիչ նյութեր են տանում իրենց տներ:²⁵

Գործընկերային հանձնաժողովները կարևոր և հարգված մարմիններ են առողջապահությունը և անվտանգությունը խրախուսելու համար: Ըստ մի ուսումնասիրության, հարցված աշխատողների մոտ 90%-ը տեղյակ է եղել այս հանձնաժողովների մասին և ինչպես են նրանք գործում, և գրեթե 70 տոկոսը նշել է, որ հանձնաժողովները պարբերաբար այցելում են իրենց աշխատավայր: Աշխատողների մեծ մասն այս հանձնաժողովները համարում են արդյունավետ և աշխատողների առողջությամբ ու անվտանգությամբ մտահոգված:²⁶ Գործընկերային հանձնաժողովները պետք է ընդգրկեն ընկերության երեք ներկայացուցիչ, երեք ներկայացուցիչ աշխատողներից և երեք այլ ներակայացուցիչ ընտրվում են փակ գաղտնի քվեարկությամբ: Եթե ընկերությունն ունի ռիսկերի կանխարգելման բաժին, ապա մեկ փորձագետ այս բաժնից պետք է ընդգրկվի հանձնաժողովի կազմում: Հանձնաժողովները պետք է հանդիպեն ամիսը մեկ անգամ և, այլ հանգամանքներից բացի, ամեն անգամ, երբ մահացու ելքով վթար է գրանցվում:

Եզրակացություններ և առաջարկություններ

Ինչպես ցույց տրվեց վերևում, Ավստրալիայի հանքարդյունաբերական ոլորտն ունի ամենալավ առողջապահական և անվտանգության ցուցանիշները: Չիլիում համարվում է, որ հանքարդյունաբերական ոլորտն ունի անվտանգության ամենաբարձր չափանիշները: Հայաստանում հանարդյունաբերության ոլորտում ԱԱԱ հարցերի նկատմամբ չկա համակարգային մոտեցում: Հանքարդյունաբերող ընկերությունների շրջանում կա շատ

²³ Նույն տեղում:

²⁴ Նույն տեղում:

²⁵ Oñate & López (2011թ):

²⁶ Նույն տեղում:

ցածր միասնականությունն առողջապահական և անվտանգության համակարգեր կիրառելու և ռիսկերի կառավարման առումով: Այս առումով կառավարությունը պետք է ստանձնի առողջության և անվտանգության մանրամասն գնահատման գործը բոլոր զգալի մեծության հանքերում, որպեսզի բացահայտի մտահոգությունն առաջացնող կոնկրետ խնդիրները: Գնահատումը պետք է հաշվի առնի Աշխատանքի միջազգային կազմակերպության` [Հանքահորերում անվտանգության և առողջության մասին C176 կոնվենցիան](#), որը սահմանում է առողջության և անվտանգության համար հիմնական պահանջները ազգային մակարդակում կիրառման համար: Այս ուսումնասիրությունը կարող է նաև հիմք ծառայել առողջության և անվտանգության հանքարդյունաբերական չափանիշներ մշակելու համար, որոնք անհրաժեշտ են, եթե կառավարությունը ցանկանցում է փոխակերպել երկրի ԱԱԱ իրադրությունը և նվազեցնել հանքարդյունաբերության հետ առնչվող վթարներն ու մահացությունները: Չուզահեռաբար թե կառավարության ներսում, թե հանքարդյունաբերության ոլորտում անհրաժեշտ են կարողությունների զարգացման նախաձեռնություններ, որպեսզի հնարավոր լինի ստեղծել անվտանգության մշակույթ, բարելավել աշխատավայրում անվտանգ գործելակերպը և նպաստել արդյունավետ կարգավորող վերահսկողությանը:

Հայաստանի ամերիկյան համալսարան
Պատասխանատու հանքարդյունաբերության կենտրոն
Մարշալ Բադրամյան 40,
Երևան 0019, Հայաստանի Հանրապետություն
+374-60-612520
crm@aua.am
crm.aua.am

mlri.crm.aua.am

ՀԱՀ Պատասխանատու հանքարդյունաբերության
կենտրոնի՝ Հանքարդյունաբերության
օրենսդրության բարեփոխման նախաձեռնությունը
(ՀՕԲՆ) ֆինանսավորվում է Թուֆենկյան
հիմնադրամի կողմից:

T U F E N K I A N

FOUNDATION